հին դեռ 1915 թուին յայտնի էր, որ Ֆրանսան ձգտում է գրաւել Կիլիկիան։ Ցարակից եւ յետագայ փաստերը հաստատում են, որ պատահական տրամադրութիւն չէ Ֆրանսայի այդ ձգտումը, այլ նրա արեւելեան քաղաքականութեան հիմնական մէկ պայմանը։ Այս վճռական հանգամանքի հանդէպ ինչքա՜ն մանկօրէն միամիտ են թւում Պօղոս Նուպարի այնքա՜ն թեթեւ հաւաստիացումները, թէ իբրեն յաջողուել է համոզել Ֆրանսացիներին, որ «նման քաղաքականութիւնը կործանարար է Ֆրանսայի շահերի» համար։ Եւ այս հաւաստիացումները արւում են Բինկինտորֆի պէս մի անձի, որը շատ լաւ գիտէր, թէ Ֆրանսան ի՞նչ հնարաւոր եւ անհնարին միջոցների է դիմում տիրելու համար Կիլիկիային։

Ի պատասխան այս պարզունակ դիւանագիտութեան, Սազոնովը հեռագրում է Բինկինտորֆին — թիւ 3476։

«Հայկական ինքնավար շրջանի կազմութիւնը սուլթանի վեհապետութեան եւ Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Անգլիայի երբեակ հովանաւորութեան ներքոյ կը լինէր բնական զարգացումը ոչ միայն Ռուսաստանի, այլ եւ իր դաշնակիցների ի վաղուց անտի բարեացակամ վերաբերումի դէպի Թիւրքահայերը։ Սակայն, կայսերական կառավարութիւնը այդ հարցի մասին վերջնական որոշում չի ընդունել, եւ բոլոր զրոյցները հայոց ներկայացուցիչների հետ կրել են զուտ ակադեմական բնոյթ»։

Որպիսի ցած չնութիւն։ մի կողմից անվերապահ խոստումներ, որոշ ծրագիր ու յանձնառութիւններ, միւս կողմից — «զուտ ակադեմական զրոյց»··· Այսպէս է եղել ցարիզմի աւանդական քաղաքականութիւնը հայերի նկատմամբ։ Այսպէս է եւ այժմ՝ ցարական ժառանգորդների քաղաքականութիւնը։ Այսպէս է, առհասարակ, ժամանակակից մեծ պետութեանց ամէն մի քաղաքականութիւն ճնշուած ազգերի վերաբերմամբ։ Դժբախտաբար, այս վերջինները ուշ են հասկանում դառն ճշմարտութիւնը։

* * *

Մինչ մի կողմից հայկական ներկայացուցիչները քաջալերւում են, հայ ժողովրդին խոստումներ են շռայլւում Թիւրքահայաստանի ինքնավարութեան մասին, անդին, նոյն պետութիւնների մէջ եւ Սազոնովի գործօն մասնակցութեամբ, գաղտնի բանակցութիւններ են վարւում՝ նպատակ ունենալով Թիւրքիայի անդամահատումը եւ հայկական վիլայէթների ու Կիլիկիայի բաժանումը Ֆրանսայի եւ Ռուսաստանի միջեւ։

1916 թ. 25 Փետր.— 9 Մարտին Պետրոգրատի մեծ-բրիտանական եւ ֆրանսական դեսպանները, յանուն իրենց կառավարութեանց, Սազոնովին ներկայացնում են մի յուշագիր, որի մէջ, պատրուակ ընդունելով արաբական շարժումը Թիւրքիայի դէմ, առաջադրում են Օսմանեան կայսրութեան անդամահատման ծրագիրը։ Արաբական երկրները, Կիլիկիան ու Հայաստանը բաժանում են ազդեցութեան երկու շրջանների՝ ֆրանսական եւ անգլիական, ուր համապատասխան պետութիւնները պէտք է ունենան բացառիկ իրաւունք նշանակելու օտարերկրեայ խորհրդականներ ու պաշտօնեաներ՝ արաբական պետութեան կամ արաբական պետութիւնների դաշնակցութեան խնդրանքով։ Մեծ Բրիտանիային տրամադրում են՝ 1) Կայֆա եւ Ակրա նաւահանգիստները, 2) երաշխիք Ջրի որոշ քանակութեան Տիգրիս ու Եփրատ գետերից A շրջանում*) B շրջանի**) համար»։ Այլեքսանդրետը դառնում է ազատ քաղաք բրիտանական առեւտրի համար եւ Կայֆան փոխադարձաբար՝ անգլիական առեւտրի համար։

Այս ծրագիրը լուրջ անհանգստութիւն է առաջ բերում Պետրոգրատում, որը շտապում է պաշտպան դուրս գալ իր անտեսուած իրաւունքների։ Սազոնովը պահանջում է որոշ սրբագրութիւններ Ֆրանսային յատկացուած շրջանների սահմաններում, եւ երկու օր յետոյ բրիտանական դեսպան Ջ. Բիւկենինը շտապում է ներկայացնել ռուսական արտաքին գործոց նախարարին, որ «Ֆրանսական կայսրութիւնը այժմ յետ է տարուած Նեստորական***) շրջանից, որը հիմա մտցուած է ենթադրուելիք ռուսական գօտիի մէջ, իսկ Փոքր Հայաստանի

*) Ֆրանսական. **) անգլիական. ***) ասորական։